

ՀԱՄԿԱՅՈՒՄԸ ԶԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԵԼԵՆԱ ԵՐԶՆԿՅԱՆ, ԴԻԱՆԱ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Լեզվի ու մտքի նյութականացվածությանը նվիրված ուսումնասիրությունները մեծ հետաքրքրություն են ներկայացնում հետազոտողների շրջանում: Մի շարք հեղինակների կարծիքով՝ վերացական հասկացությունների հիմքում ընկած են կոնկրետ հասկացություններ¹: Սույն հոդվածում փորձ է արվում ցույց տալու, որ, ինչպես վերացական այլ հասկացություններ, հասկացումը նույնպես նյութականացված է: Սա նշանակում է, որ հասկացման գործընթացը հիմնված է ֆիզիկական փորձի վրա, որը հանդես է գալիս որպես զգայական փորձ, այսինքն՝ *տեսնելու*, *լսելու* և *զգալու* փորձ, որի շնորհիվ տեղի է ունենում հասկացումը:

Լեզվի և մտքի նյութական լինելն արտահայտվում է ճանաչողական փոխաբերությունների միջոցով: Օրինակ՝ մեծ քանակը դիտարկվում է որպես բարձր, իսկ քիչը՝ որպես ցածր (Ջ. Լեյքոֆ, Մ. Ջոնսոն, Վ. Էվանս, Մ. Գրին): Նման աշխարհընկալումը հիմնված է ամենօրյա զգայական փորձերի ամբողջության վրա: Ըստ այդմ՝ ունենում ենք *More is up* ճանաչողական փոխաբերությունը, որը հայտնի է նաև որպես *Quantity is vertical elevation*²: Հարկ է նշել, որ մտավոր գործունեություն արտահայտող մի շարք բառեր ի սկզբանե եղել են նյութականացված, այսինքն՝ զգայական են, արտահայտում են ֆիզիկական զգայական փորձ: Ժամանակի ընթացքում իմաստափոխության հետևանքով դրանք կորցրել են այդ իմաստը և այսօր ընկալվում են միայն որպես մտավոր գործունեություն արտահայտող բայեր: Այսպես, *know* բայը սկզբնապես արտահայտել է զգայական փորձ՝ *see, grasp, hear, smell, taste, feel* բայերի նմանությամբ: Նույն կերպ անգլերեն *idea* գոյականը սերում է հնդեվրոպական *weid* արմատից, որը նշանակում է *տեսնել*³:

Նկարագրվածը համահունչ է Ա. Քրուզի աշխատություններից մեկում արտահայտված այն կարծիքին, որ ֆիզիկական գործողությունը,

¹ Ճանաչողական փոխաբերության ու փոխանունության, նյութականացվածության մասին մանրամասն տե՛ս **Lakoff G., Johnson M.** *Philosophy in the Flesh: the Embodied Mind and Its Challenge to Western Thought*, New York, 1999, **Lakoff G., Johnson M.** *Metaphors We Live by*, London, 2003, **Ungerer F., Schmid H.J.** *An Introduction to Cognitive Linguistics*, Edinburgh, 2006:

² Տե՛ս **Evans V., Green M.** *Cognitive Linguistics: An Introduction*, Edinburgh, 2006, էջ 164-165:

³ Տե՛ս **Rohrer T.** *Three Dogmas of Embodiment: Cognitive Linguistics as a Cognitive Science* // *Cognitive Linguistics: Current Applications and Future Perspectives*, New York, Berlin, 2006, էջ 126:

ի տարբերություն մտավորի, ավելի հիմնարար է: Նշված դրույթը հեղինակը հստակեցնում է *grasp* բայի օրինակով՝ այն դիտարկելով և՛ որպես ֆիզիկական գործողություն, և՛ որպես մտավոր գործողություն արտահայտող բայ: Այդ կապակցությամբ նա նշում է, որ *grasp* բայի դեպքում ավելի հեշտ է հասկացումը բնութագրել որպես *taking hold of something with the mind*, քան *taking hold of something-ը՝ որպես understanding with the hands*⁴:

Սույն հոդվածում հասկացում արտահայտող անգլերեն և հայերեն որոշ բայերի օրինակներով հիմնավորվում է հասկացման նյութականացված լինելը: *Տեսնելը, լսելը* և *զգալը* հասկացման գործընթացի իրականացման կարևորագույն նախապայմաններից են:

Նախ անդրադառնանք *հասկանալը տեսնել է* թեզին: Սույն թեզը հիմնավորելու նպատակով դիտարկենք անգլերեն *see, read, view, envision* հասկացում արտահայտող բայերը, որոնք իրենց արտահայտած իմաստով ձևավորում են առանձին միկրոդաշտ, որտեղ տեսողության ունակությունը/կարողությունն առանցքային տեղ է զբաղեցնում բայերի իմաստային կառուցվածքում:

Ինչպես ցույց է տալիս համատեքստերի քննությունը, *see, read, view, envision* բայերը գնահատողական բնույթ ունեն և համատեքստում արտահայտվում են *see/read/view/envision smb/smtl as* կառույցով:

Դիտարկենք *see* բայը. առանձնացնում ենք ինչպես **դրական սուբյեկտիվ գնահատում** (*see as preferable, as glorious demonstration of his character, as toughness and leadership, relentlessly from the first moment, as a coherent whole, as a career development move*), այնպես էլ **բացասական սուբյեկտիվ գնահատում** (*see as a threat, as a rough old stomach-burner*) (BNC)⁵:

Read բայի դեպքում համատեքստերը թույլ են տալիս վեր հանել խոսողի՝ *read* բայով արտահայտած հասկացման գնահատումը՝ այսինքն՝ այն **ակտիվ/ընթացող գործողություն է՝** *read as referring to one to which this subsection applies, as covering this situation, as being constrained by the Rules, as applying except where the context otherwise requires, as excluding a case of this kind, as implicitly setting out this principle, as suggesting that these earlier stages are merely interlocutory* (BNC):

Համատեքստերի քննությունից ակնհայտ է դառնում, որ *view* հասկացում արտահայտող բայի դեպքում տրվում է ինչպես **դրական սուբյեկտիվ գնահատում** (*view as being the major promoter of evolution, as an investment in risk reduction, as a strength, as attractive, as innovative, as positive and constructive forces, as bringing peace, viewed as "civil"*), այնպես էլ **բացասական սուբյեկտիվ գնահատում** (*view as dismal, dirty, draughty*)

⁴ Տե՛ս **Cruse A.** A Glossary of Semantics and Pragmatics, Edinburgh, 2006, էջ 97:

⁵ Անգլերեն օրինակները քաղված են Բրիտանական ազգային կորպուսից, տե՛ս **British National Corpus (BNC)** // URL: <http://corpus.byu.edu/bnc/>

places, as a structured set of dispositions, as impossible, as less important, as a necessary evil, as incompetent, as uneducated) (BNC):

Envision հասկացում արտահայտող բայի դեպքում կրկին առնչվում ենք խոսողի՝ իրականության, երևույթի նկատմամբ ունեցած գնահատման, վերաբերմունքի հետ: Ի տարբերություն *see, read, view* բայերի՝ ուսումնասիրվող բայը հիմնականում գուգորդվում է դրական վերաբերմունքի/գնահատման/կարծիքի հետ: Դա արտահայտված է ինչպես բառարանային սահմանումներում, այնպես էլ ուսումնասիրված համատեքստերում: Հավաքված նյութերը փաստում են, որ *envision* բային հատուկ է **դրական սուբյեկտիվ գնահատում**՝ *envision - imagine or expect something in the future, especially something good*⁶: *Envision as...* կառույցին հաջորդում են դրական գնահատումներ՝ *envision as the ideal-cable layer, as something that would be the smart thing to do, as the wise figure of an elder mentor, as heroes fighting injustices, as part of a greater whole, as an important means for intercultural transmission of painfully achieved modalities of experience, as the kind of place that someone would like to stay fulltime* (BNC):

Ինչպես երևում է բերված օրինակներից, *see, read, view, envision* բայերին հատուկ է ընդգծված գնահատողականություն: Դրական կամ բացասական գնահատումները պայմանավորված են խոսողի՝ քննարկվող նյութի, երևույթի նկատմամբ ունեցած վերաբերմունքով: Հետևաբար, գնահատումը, որը խոսողի վերաբերմունքի արտացոլումն է, սերտորեն կապված է նաև խոսողի հույզերի հետ, արտահայտում է խոսողի զգացմունքները:

Ընդհանրացնելով նշենք, որ գնահատումը, վերաբերմունքը, հույզը անբաժանելի են միմյանցից և սովորաբար միասին են դրսևորվում: Գնահատումը, հույզը հասկացման նշորդներ են, միևնույն ժամանակ անհնար է գնահատել՝ չունենալով վերաբերմունք երևույթի նկատմամբ: Այսպես, վերաբերմունքը խոսողի դիրքորոշումն է երևույթի նկատմամբ, այն սովորաբար մտավոր մակարդակում է գործում, վերացական է: Վերաբերմունքը կարող է նյութականացվել՝ ստանալ ֆիզիկական արտահայտություն հույզերի միջոցով: Գնահատումը հույզերի և վերաբերմունքի խոսքային արտահայտությունն է:

Մի շարք բառարանների ու համատեքստերի քննությունը ցույց է տալիս, որ հուզականությունն ուղղակիորեն է արտահայտվում միայն *view* բայի դեպքում: Վերջինիս հատուկ է հուզականության բարձր մակարդակ, որը բացահայտում է խոսողի վերաբերմունքը ինչպես խոսակցի, այնպես էլ իրավիճակի նկատմամբ: *View* բայով արտահայտված հասկացմանը հատուկ են և՛ **դրական** (*view more sympathetically, especially sympathetically, cautiously, selectively, positively, with much interest, satisfaction, favourably*), և՛ **բացասական հույզեր** (*view with caution,*

⁶ Տե՛ս **Cambridge Advanced Learner's Dictionary and Thesaurus**, 3rd edition, 2007 // URL: <http://dictionary.cambridge.org/>

with considerable anger, with some misgivings, with great disdain, with alarm, askance, with either glee or regret, with skepticism, with increasing misgiving and distrust, with suspicion, with quite the same violent passion, with some gloom, with distaste, with mounting horror, with superstition, with a certain tolerant contempt, with dismay, with anxiety, with not necessary objectivity, with an appropriate degree of revulsion) (BNC):

Գոյություն ունի նաև սերտ փոխկապակցվածություն տեսողության ունակության, լույսի և հասկացման միջև⁷: Այս բայերով արտահայտված հասկացումը հարաբերական է՝ կախված այն բանից, թե հասկացման ենթակա նյութն ինչ լույսի ներքո է մատուցվում, քննվում: Դժվար չէ նկատել նաև, որ *see, read, view* բայերով համատեքստերի ճնշող մեծամասնության մեջ առկա է լույսի գաղափարը (*see/read/view in the light – see something in its true light, read in the light of knowledge then available, view in the same light*) (BNC), քանի որ հենց լույսի միջոցով է հնարավոր դառնում ոչ միայն տեսնել, այլև հասկանալ:

Այսպիսով, ուսումնասիրվող բայերի դեպքում տեսնելու զգայական փորձը զուգորդվում է գնահատման, խոսողի վերաբերմունքի, հույզերի հետ:

Այժմ վերոնշյալ *see, read, view, envision* բայերը զուգադրենք հայերեն համարժեքին՝ *տեսնել* բային: Օրինակ⁸

Մեր կալանավորները մի կողմից՝ ապշած զննում էին անելանելի բաներ, մյուս կողմից՝ խլշած *ականջ էին դնում*, որ *տեսնեն*⁹՝ որտեղի՞ց էին գալիս խառնաշփոթ *ձայները*⁹:

— Լավ. ես լռում եմ. *տեսնենք* ինչ ես *խոսում*: Եվան աթոռը մոտ քաշեց¹⁰:

— Փառք աստծո, որ այդպես թեթև ես պրծել: Ես էլ ասում եմ՝ ինչու այս երկու օրս չես երևում: Հետո՞, *պատմիր տեսնեմ*¹¹:

Այս օրինակներում հասկացումը զուգորդվում է ձայները լսելու, ականջ դնելու, ինչ-որ մեկի խոսքը, պատմածը լսելու հետ: Ուստի հստակ է լսողություն-տեսողություն-հասկացում փոխադարձ կապը:

Որոշ դեպքերում *տեսնել* բայով արտահայտված հասկացումը զուգորդվում է զգալու հետ: Օրինակ՝

Կրկնում եմ. այդ ես փորձով *տեսնում ու զգում* էի, ուրեմն և *հաս-*

⁷ Տե՛ս **Ղ. Մովսիսյան**, Հասկացումը ճանաչողական լեզվաբանության դիտանկյունից // «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական հանդես, №1 (18), Եր., 2015, էջ 90-91:

⁸ Հայերեն օրինակները քաղված են գրական ստեղծագործություններից և Արևելահայերենի ազգային կորպուսից, տե՛ս **Eastern Armenian National Corpus (EANC)** // URL: <http://www.eanc.net/>

⁹ **Ղ. Աղայան**, Անահիտ // URL: <https://grqamol.am/article/ghazaros-aghayan-anahit-bernel/>, 2015, էջ 15:

¹⁰ **Նար-Ղոս**, Մահը // URL: <https://grqamol.am/article/nar-dos-mahy-bernel/>, 2014, էջ 40:

¹¹ Նույն տեղում, էջ 118:

կանուս, որ այդ այդպես էլ պետք է լինի և ուրիշ կերպ չի կարող լինել¹²:

Տեսնելով, առավելապես *զգալով* անկարեկից սառնությունը, որով Եվան ընդունեց իր խոստովանությունը, նրան թվաց, թե անդառնալի կերպով կորցրեց մի թանկագին բան. կորցրեց իր հեղինակությունը Եվայի առաջ...¹³

Այստեղ Վաչագանը մի անսովոր սարսուռ *զգաց՝ տեսնելով*, որ այստեղից իր կամքով դուրս գնալու հնար չի ունենալու¹⁴:

Վերը բերված օրինակներում առնչվում ենք զգալու ունակություն-տեսողություն-հասկացում փոխադարձ կապին: Ամփոփելով վերը ասվածը՝ կարող ենք նշել, որ *տեսնել* բայն արտահայտում է զգայական հասկացում:

Քննարկվող բայերում (անգլ. *see, read, view, envision*, հայ. *տեսնել*) տեսնելու ֆիզիկական փորձն ուղղակիորեն է արտահայտված նշված հասկացում արտահայտող բայերի իմաստային կառուցվածքում: Այս բայերը ճանաչողական փոխաբերության օրինակներ են, որտեղ տեսնելու ֆիզիկական փորձի միջոցով արտահայտվում է հասկանալու վերացական փորձը:

Ամփոփելով նշենք, որ ինչպես անգլերենում, այնպես էլ հայերենում *հասկանալը տեսնել է*, այսինքն՝ ենթադրում է տեսնելու ունակություն: Ջուզադրելով անգլերենի և հայերենի փաստական նյութը՝ կարող ենք նշել, որ եթե անգլերեն բայերն (*see, read, view, envision*) արտացոլում են գնահատում-հույզեր-վերաբերմունք-տեսողություն-հասկացում և լույս-տեսողություն-հասկացում փոխադարձ կապ, ապա հայերեն հասկացում արտահայտող բայը (*տեսնել*) արտացոլում է լսողություն-տեսողություն-հասկացում և զգալու ունակություն-տեսողություն-հասկացում փոխադարձ կապ: Կարող ենք եզրակացնել, որ հայերենում խոսողը նաև «տեսնում» (հասկանում) է այն, ինչ լսում և զգում է, մինչդեռ անգլերենում «տեսնելով» միաժամանակ արտահայտում է իր դրական կամ բացասական գնահատումը, հույզերը, վերաբերմունքը:

Հասկացում արտահայտող անգլերեն *perceive* և հայերեն *ըմբռնել, ընկալել* բայերի օրինակով շարունակենք հիմնավորել հասկացման գործընթացի զգայական լինելը: Այս բայերը նույնպես ճանաչողական փոխաբերության օրինակներ են, որտեղ հասկացումը բռնելու, վերցնելու ֆիզիկական փորձի փոխաբերական արտահայտումն է (*perceive = per “thoroughly” + capere “grasp, take”*¹⁵, *կալել/կալնել=բռնել*¹⁶): Ի տարբերություն առաջին խմբի բայերի՝ սրանց իմաստային կառուց-

¹² Նույն տեղում, էջ 145:

¹³ Նույն տեղում, էջ 97:

¹⁴ Ղ. Աղայան, նշվ. ստեղծ., էջ 15:

¹⁵ Տե՛ս **Online Etymology Dictionary** // URL: <http://www.etymonline.com/>

¹⁶ Տե՛ս «Ժամանակակից հայերենի բացատրական բառարան», հ. 3, Եր., 1969, էջ 14:

վածքում առանցքային է ոչ թե տեսնելու, այլ բռնելու, վերցնելու ունակությունը: Հարկ է նշել, սակայն, որ բազմաթիվ համատեքստերի քննությամբ պարզ է դառնում, որ այս բայերով արտահայտված հասկացման տեսակը ևս խարսխվում է տեսողության ունակության վրա.

Till we ourselves *see* it with our own *eyes*, and *perceive* it by our own *understanding*, we are in the *dark*¹⁷.

For as classy, clever and well-spun as Twin Peaks is, it makes the mistake of presuming the *viewer* will *watch* and listen and *perceive* (BNC, The face, 1990).

It is not evident that most of our partners *perceive* us in the same constructive *light* as we *see* ourselves (BNC, Home material, 1985-1994):

Այս օրինակներում հասկացման գործընթացը զուգորդվում է տեսնելու ունակությանը, քանի որ *eyes*, *viewer*, *see*, *light* բառերը ներկայացված համատեքստերում անմիջականորեն զուգորդվում են հասկացման գործընթացի հետ և իրենց արտահայտած իմաստով պատկանում են տեսողության իմաստային դաշտին: Բերված օրինակները մեկ անգամ ևս հաստատում են, որ հասկացումը զգայական է, և գոյություն ունի լույս-տեսողություն-հասկացում շարունակական և անբաժանելի կապ:

Տեսողության ունակությունն ու լույսի առկայությունն այն նախապայմաններից են, որոնք սահմանում են *ըմբռնել* բայով արտահայտված հասկացումը.

Նովելիի խաղը *տեսնելով ըմբռնեցի* նույնպես, որ յուրաքանչյուր գործ ունենալով իր ինքնահատուկ ոճը, նրա խաղարկությունը ևս պետք է լինի համապատասխան ոճով (EANC, Վ. Փափագյան, Հետադարձ հայացք 1):

Ականատես էր եղել, թե ինչպես մեքենան քարուքանդ է անում ձեռնարհեստը, բայց չէր *ըմբռնել* դրա զարհուրելիությունը (EANC, Ս. Ալաջաջյան, Առանց հայրենիքի):

Բայց *աչքերը հոգնել* էին, իսկ միտքը ոչինչ չէր *ըմբռնում կարողացածից* (EANC, Ա. Շիրվանզադե, Քառս):

Այժմ դիտարկենք հայերեն *ընկալել* հասկացում արտահայտող բայի նմանատիպ գործածություններ

... բայց անհնար է մոռանալ կույրերի միավորման շատ համով-հոտով մարդկանց, որոնք կարծես կյանքը շատ ավելի լիահունչ են *ընկալում*, քան շատ տեսնողներ... (EANC, «Ազգ», 2005):

Երբ տեսնում ենք հրաշագեղ վերջալույսը և հիանում նրա բազմերանգ նրբություններով, մենք *ընկալում ենք մեր տեսողությամբ*, պատկերացում ստանում... (EANC, «Հայ լեզվաբանության պատմություն», 1962):

¹⁷ Տե՛ս Noah Webster's 1828 American Dictionary of the English Language (1828 Facsimile Edition). Foundation for American Christian Education, 1967 // URL: <http://1828.mshaffer.com/>

Այդ լայն ճանաչողությամբ է, որ կրնանք մեծցնել մեր *տեսադաշտը* և *ընկալել* մեզ շրջապատող միջավայրը առանց սեփական ունեցածի կորուստի մասին մտածելու... (EANC, «Հայրենիքի ձայն», 1987):

Անդրադառնալով հասկացման և տեսողության փոխկապակցվածությանը՝ հարկ է կրկին անդրադառնալ լույսի մասին թեզին. *ըմբռնել* և *ընկալել* բայերով արտահայտված հասկացումը տեղի է ունենում բավականաչափ լույսի առկայության դեպքում, այլ կերպ ասած՝ հասկացման օբյեկտի վրա բավականաչափ լույս սփռելը կանխորոշում է հասկացումը.

Երբ խեղճ արքայի հիշողությունը *լուսավորվում է, նա ըմբռնում է*, թե ինչու համար եկել ենք այստեղ (EANC, Վ. Փափագյան, Լիր արքա):

...և ամռան գիշերը միայն *աստղերով լուսավորված* տափաստանում, այսինքն *աչքով ընկալվող պայծառությունը* տարբերվում է միլիարդ անգամ (EANC, «Գիտությունն ավտոմեքենա վարելու մասին», 1981):

Բերված օրինակները ցույց են տալիս, որ *ըմբռնել*, *ընկալել* նշանակում են *տեսնելով հասկանալ*, այսինքն՝ տեսանելի լինելն այն նախապայմանն է, որի դեպքում տեղի են ունենում ըմբռնումը, ընկալումը: Տեսնելու շնորհիվ ձևավորվում է մտավոր տեսադաշտ, որի հասանելիության սահմաններում տեղի է ունենում հասկացումը՝ ըմբռնումն ու ընկալումը:

Այսպես, անգլերեն *perceive* և հայերեն *ըմբռնել*, *ընկալել* բայերի համատեքստային կիրառությունների միջոցով մեկ անգամ ևս փորձեցինք ցույց տալ, որ հասկացումը զգայական գործընթաց է, ընդ որում՝ հասկացման զգայական լինելը հիմնավորվեց լույս-տեսողություն-հասկացում կապի միջոցով:

Հասկացումը հիմնվում է նաև մեկ այլ զգայության՝ լսողության վրա: Նշված դրույթը փորձենք հիմնավորել անգլերեն *perceive* և հայերեն *ըմբռնել*, *ընկալել* բայերի միջոցով: Օրինակ՝

Chopin was the only important composer who thought entirely in terms of the piano, whereas it was always essential for me to *perceive* piano music as a receptacle for all music possibilities... (BNC, CD review, 1992).

The thing is, you can use the filthiest *sound* in the world, but if you mix it really low, you'll actually *perceive* it as a clean sound (BNC, Guitarist, 1992).

For example, different *instances of sounds* that human listeners *perceive* as the same may have very different waveforms (BNC, Large vocabulary semantic analysis for text recognition, 1985-1994):

Այս համատեքստերի հպանցիկ ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ *perceive* բայով արտահայտված հասկացման տեսակը զուգորդվում է նաև լսողության կարողության հետ: Դա հաստատվում է *music, sound, instances of sounds* բառերի ու բառակապակցությունների արտահայտած իմաստով, որոնք միաժամանակ ունեն *perceive* բայի ուղիղ խնդրի գործառույթ: Ըստ այդմ կարող ենք եզրա-

կացնել նաև, որ *perceive as* կառույցի տեսքով արտահայտվում են գործողության սուբյեկտի՝ տվյալ իրավիճակի գնահատումը, փաստի նկատմամբ վերաբերմունքը:

Դիտարկենք նաև այլ խոսքային գործածություններ:

Օլգան նրբագագորեն *ականջ էր դնում*, փորձում էր իրեն, բայց բան չէր հասկանում, չէր կարողանում *ըմբռնել*, թե ժամանակ առ ժամանակ ինչ է խնդրում, ինչ է փնտրում հոգին... (EANC, Ի. **Գոնչարով**, Օբլոմով):

Գրաբար բառեր գործածելը հեշտ է, բայց մարդ պետք է ճաշակ ունենա նրանց ընտրելու համար, պետք է *երաժշտական լսողություն* ունենա, որ *ըմբռնի*, ո՞ր բառը որտե՞ղ կարող է քաղցր հնչել և որտե՞ղ անախորժ (EANC, Ս. **Շիրվանզադե**, Հուշեր):

Բոլոր ուսանողներն էլ *լսում են* դասախոսությունը, այսինքն բոլորի մոտ էլ կա *լսելու զգայության պրոցես*, բայց նրանք բոլորը միատեսակ չեն *ըմբռնում*... (EANC, Մ. **Մազմանյան**, Մանկավարժական հոգեբանության մի քանի հարցեր, 1975):

... ընդունակ են *ընկալելու* չղջիկների *էխոլոկացիոն ուլտրաձայնային ազդանշանները* և թաքնվելու նրանցից (EANC, ՀՄՀ, հ. 4, 1978):

Վարորդին չի կարելի ամբողջովին մեկուսացնել խցիկից դուրս առաջացած *ձայներից*, քանի որ նա պետք է *ընկալի* վազանցող ավտոմեքենայի *ձայնային ազդանշանները* (EANC, «Գիտություն ավտոմեքենա վարելու մասին», 1981):

Քրիստոնյա շինականը *ականջի պոչով ընկալում էր* հեթանոս *երգը* (EANC, Խ. **Գյուլնազարյան**, Նոանի):

Բերված օրինակները հաստատում են, որ *ընկալել*, *ըմբռնել* բայերով արտահայտված հասկացման տեսակը սերտորեն կապված է նաև լսողության կարողության հետ: Ինչպես հետևում է ներկայացված համատեքստերից, *ըմբռնել*, *ընկալել* բայերն իրենց արտահայտած իմաստներով մոտենում են *լսել* բային:

Այս և այլ օրինակները կրկին հաստատում են, որ հասկացումը զգայական է, տվյալ դեպքում զգայական հասկացման հիմքում լսողություն-հասկացում կապն է:

Հավելենք նաև, որ զգայական փորձը դրսևորվում է ոչ միայն տեսողության, լսողության, այլև համի, հոտի և շոշափելիքի զգայարանների միջոցով¹⁸, երբեմն զգայական է համարվում նաև ներբերմունքը: Լեզվի մակարդակում գործող այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են՝ *համը զգալ*, *հոտը զգալ*, *մաշկի վրա զգալ*, *կանխազգալ* և այլն, հաստատում են, որ զգալը հավասարապես վերաբերում է զգայարաններից յուրաքանչյուրի աշխատանքին: Դա նշանակում է, որ տեսողության և լսողության ունակությունները զգալու (զգայությունների)

¹⁸ Տե՛ս Ս. **Մանուչյան**, Զգայություն և ընկալում, 2017 // URL: <http://boon.am/perception/>

մասնավոր դրսևորումներ են: *Ձգալը* ընդհանրական է, իսկ *տեսնելը* և *լսելը*՝ մասնավոր:

Ինչ վերաբերում է *perceive* բային, այն նույնպես արտահայտում է տարբեր զգայությունների վրա հիմնված հասկացման տեսակ.

Now this one is about how you prefer to take in information, how you prefer to understand things. It's about perception. Now the sensing person, prefers to use her *five senses to perceive* what's going on about her (BNC, Career's guidance: seminar, 1993).

And he describes them in these terms because of course this is how he sees them from different angles while rounding a series of bends on the road, so that in fact he describes the movement which his *senses perceive*, not the solid immobility to which his intellect testifies (BNC, Ideas in Action programmes, 1985-1994).

The ability to organise a classroom, a group or an individual child, to structure experience so that learning not only occurs at the moment of teaching but remains; the *sensitivity to perceive* the world from a child's perspective, the understanding to build for tomorrow upon the child's present... (BNC, What is happening to our primary schools, 1987):

Կարելի է նկատել, որ զգայություններն այն ռեսուրսներն են, որոնց գործառնան/առկայության դեպքում հնարավոր է դառնում *perceive* բայով արտահայտված հասկացումը: *Perceive* բայն արտահայտում է զգայական հասկացում, ընդ որում՝ սերտորեն փոխկապակցված է ինչպես բոլոր հինգ զգայությունների հետ՝ *perceive – become aware of (something) especially by the use of one of the senses, especially that of sight¹⁹, become aware of directly through one of the senses, especially sight or hearing²⁰, notice something using your senses (your ability to see, hear, smell, etc)²¹, become aware of through the senses²², notice something or someone by using sight, sound, touch, taste, or smell²³, take cognizance of the existence, character, or identity of, by means of the senses; see, hear or feel²⁴*, այնպես էլ երբեմն վեցերորդ զգայություն համարվող ներըմբռնման հետ՝ *be convinced of by direct intuition²⁵*:

Համատեքստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ *ըմբռնել* բայով արտահայտված հասկացման հիմքում նույնպես *զգայն* է: Այլ կերպ ասած՝ հասկացման կարևորագույն նախապայմաններից է զգալը.

¹⁹ Տե՛ս **Oxford Dictionary of English**, 2nd ed., revised / Soames C., Stevenson A. (eds.) Oxford, 2009 // URL: <http://www.oxforddictionaries.com/>

²⁰ Տե՛ս **The American Heritage Dictionary of the English Language**, 4th edition, 2000 // URL: <https://www.ahdictionary.com/>

²¹ Տե՛ս **Macmillan English Dictionary** // URL: <http://www.macmillandictionary.com/>

²² Տե՛ս **Merriam-Webster's Online Dictionary** // URL: <http://www.merriam-webster.com/>

²³ Տե՛ս **Cambridge Advanced Learner's Dictionary and Thesaurus**, 3rd edition, 2007 // URL: <http://dictionary.cambridge.org/>

²⁴ Տե՛ս **Noah Webster's 1828 American Dictionary of the English Language**, (1828 Facsimile Edition). Foundation for American Christian Education, 1967 // URL: <http://1828.mshaffer.com/>

²⁵ Տե՛ս **Noah Webster's 1913 American Dictionary of the English Language** // URL: <http://1828.mshaffer.com/>

Անզգամ մարդը չի ըմբռնի, և անմիտը չի հասկանայ այս (EANC, Հին կտակարան, Մադմոս 91.7):

Կրնա՞նք մենք զգալ կամ ըմբռնել բնությունը ճապոնացու մը պես, բայց ես սիրում եմ ճապոնական «էստամպները», ինչպես հունական սափորներու և սկահակներու վրայի նկարչությունը (EANC, «Ազգ», 2005.02.26):

Իրենց հոգիին դռները լայն բացած՝ շատերը կրցան զգալ ու ըմբռնել այս գործողութեան ընդմէջէն հայ ժողովրդին եւ միջազգային հանրային կարծիքին ուղղուած նշանակալից պատգամը (EANC, «Հորիզոն», 1983.09.26.№18):

Ընկալել բայի դեպքում հասկացումն ուղղակիորեն զուգորդվում է ոչ թե զգալու, այլ հույզերի հետ՝ որպէս զգայական տարբեր փորձերի փաստական արտահայտություններ: Ինչպէս երևում է ուսումնասիրված համատեքստերից, հասկացումն ընկալել բայի դեպքում զուգորդվում է մի կողմից՝ դրական (գոհունակությամբ ընկալել, խնդության մի զգացումով ընկալել), մյուս կողմից՝ բացասական (ագրեսիվ, վրդովմունքով ընկալել, դառնազգացողության ուղեկցությամբ ընկալել, ընկալել հիվանդագին, ծանր ընկալել) հույզերի հետ: Ուստի տվյալ դեպքում ևս հասկացումը զգացական բնույթ ունի, քանի որ զուգորդվում է գործողության սուբյեկտի հույզերի, զգացմունքների հետ:

Այսպիսով, ինչպէս անգլերենում, այնպէս էլ հայերենում հասկացումը հուզական-զգացական գործընթաց է: Անգլերենում հուզականության/զգացականության իմաստային ներուժը հատուկ է view բային, որի համար առանցքային է տեսնելու իմակը, իսկ հայերենում՝ ընկալել բային, որի համար առանցքային է բռնելու, վերցնելու իմակը:

Այժմ անդրադառնանք կիրառման մեծ հաճախականություն ունեցող ըմբռնել/ընկալել իբրև, ըմբռնել/ընկալել որպէս կառույցներին: Նշված կառույցները քննության առնելով բազմաթիվ համատեքստերի մեջ կարող ենք կատարել մի քանի դիտարկում:

Նախ նշենք, որ քննարկվող կառույցներում հաճախ առկա է խոսողի կողմից սխալ որակվող հասկացում բնութագրելու ներուժը:

Տորքի «Անգեղեա» մակդիրը Խորենացու ժամանակ ժողովրդական ստուգաբանությամբ ըմբռնվել է իբրև տգեղ, մինչդեռ այն նշանակում է Անգեղի սերունդ, Անգեղյան (EANC, ՀՄՀ, հ. 12, 1986):

... «չնայած նրա դեմ քո նյութած դավերին». նման դեպքում հերքումն ընկալվում է իբրև նրա առջև «մեղքերդ քավելու» ցանկություն (EANC, «Առավոտ», 2006):

Բերված օրինակները ևս մեկ անգամ հաստատում են, որ ըմբռնել և ընկալել բայերը ցույց են տալիս սուբյեկտիվ, գնահատողական հասկացում, որի միջոցով խոսողը/հեղինակն առավել հաճախ արտահայտում է իր անհամաձայնությունը իրականության նմանատիպ հասկացման վերաբերյալ, քանի որ այլ ըմբռնում, այլ ընկալում էր ակնկալում:

Ընկալել բայի քննությունը ցույց է տալիս, որ համատեքստերի ճնշող մեծամասնության մեջ տարբեր երևույթներ **բացասական** են գնահատվում, հասկացվում են բացասական՝ *ընկալել որպես ծայրագույն պարտություն, որպես անորակ ու ռաբիս, որպես կեղծ օրենսդիրների մի համախումբ, իբրև անիմաստ, անհեթեթ, արվեստի էության հետ կապ չունեցող փաստաթղթեր, որպես դավաճանություն, որպես խրախուսանք իրենց ստեղծությունն արտահայտելու համար:*

Կարող ենք եզրակացնել, որ ինչպես անգլերենում, այնպես էլ հայերենում գնահատումն ուղղակիորեն գուգորդվում է հասկացման գործընթացի հետ: Մակայն պետք է նշել, որ եթե անգլերենում գնահատում-վերաբերմունք-հասկացում կապն արտահայտվում է այն բայերի միջոցով, որոնց իմաստային կառուցվածքում առաջնային է *տեսնելու* իմակը, ապա հայերենում այդ գործառույթը ստանձնում են այն բայերը, որոնց իմաստային կառուցվածքում առաջնային է *բռնելու, վերցնելու* իմակը:

Հնդվածում հնչեցված դրույթներն ամփոփենք հետևյալ գծապատկերի տեսքով.



Ի մի բերելով վերը շարադրածը՝ որպես եզրակացություն կատարենք մի քանի ընդհանրացումներ: Ինչպես անգլերենում, այնպես էլ հայերենում հասկացումը հիմնվում է զգայական փորձի վրա. *տեսնելու, լսելու* և առհասարակ *զգալու* ունակությունները հասկացման գործընթացի նախապայմաններից են: Այնուամենայնիվ, զգայական բոլոր փորձերից առավել մեծ կարևորություն ունի *տեսնելու* փորձը. տեսնե-

լու ունակությունը հասկացման կարևորագույն նախապայմանն է: Հասկացումը ոչ միայն զգայական, այլև հուզական-զգացական գործընթաց է, քանի որ հասկացումն անմիջականորեն զուգորդվում է գործողության սուբյեկտի՝ իրավիճակի/հաղորդվող տեղեկատվության գնահատման, դրա նկատմամբ վերաբերմունքի և ուղեկցվող հույզերի հետ: Հավելենք նաև, որ հուզականությունը/զգացականությունն այնպիսի մի ցուցիչ է, որը հաստատում է հասկացման իրականացումը: Հույզերը, զգացմունքները վերջին հաշվով ստանում են ֆիզիկական արտահայտություն, այսինքն՝ նյութականացվում են: Ուստի գոյություն ունի զգայություն-հասկացում-զգացականություն շղթայական կապ: Զգայական փորձը հասկացման նախապայմանն է, իսկ հույզերը/զգացմունքները՝ հասկացման նշորդներ: Ընդ որում՝ նյութականացված են թե՛ առաջինը, թե՛ երկրորդը:

Բանալի բառեր – *հասկացում, նյութականացվածություն, զգայություններ, տեսնել, լսել, գնահատում, վերաբերմունք, հուզականություն*

ЕЛЕНА ЕРЗИНКЯН, ДИАНА МОВСИСЯН – Понимание в контексте чувственного восприятия. – В статье рассматривается процесс понимания в свете чувственного восприятия. На примере английских и армянских глаголов восприятия показано, что понимание, подобно другим абстрактным категориям, материально. Основными его предпосылками являются зрение, слух, осязание. Согласно полученным данным, процесс понимания эмоционально маркирован и с неизбежностью включает в себя оценку передаваемой информации.

Ключевые слова: *понимание, материализация, осязание, зрение, слух, оценивание, отношение, эмоциональность*

YELENA YERZINKYAN, DIANA MOVSISYAN – Understanding in the Context of Sensual Perception. – The article discusses the process of understanding in the light of sensual perceptions. On the basis of both English and Armenian verbs of perception, it is shown that understanding is embodied and is preconditioned by seeing, hearing and sensing. The study also shows that the process of understanding necessarily requires evaluation of the communicated information and is emotionally coloured.

Key words: *understanding, embodiment, sensing, seeing, hearing, evaluation, attitude, emotionality*